ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.07.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/84

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Վարմէքս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Վ. Ավագյանի (լիազորագիր, տրված՝ 13.06.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.06.2019թ. թիվ 26/26-1/9251-2019 գրությամբ «Վարմէքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի 31.05.2019թ. թիվ 1/2968-19 գրության հիման վրա, 04.06.2019թ. թիվ 26/26-1/9251-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով

նախաձեռնել «Վարմէքս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Վարմէքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Վարմէքս» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Վարմէքս» ՍՊԸ-ն տարիներ շարունակ մասնակցել է ՀՀ գնումների մրցույթներին: 2017թ. շահել է 6 011 200 ՀՀ դրամի մրցույթ, 2018թ.՝ 25 838 564 ՀՀ դրամ, 2019թ. մինչ օրս՝ 37 634 940 ՀՀ դրամ:

Ընկերությունն ամսական ՀՀ պետական բյուջե է վճարում 9-15 մլն. ՀՀ դրամ հարկ, ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունենում, միասնական հաշվին գրեթե միշտ առկա է գումար, իսկ 27.03.2019թ. միասնական հաշվում առկա է եղել 380 002 ՀՀ դրամ:

27.03.2019թ. «Վարմէքս» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ Ազգային ժողովի կողմից հայտարարված «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին: Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել երեք չափաբաժիններով՝ գնային առաջարկի ընդհանուր գինը կազմելով 983 004 ՀՀ դրամ: Առաջին տեղ է զբեղեցրել 1-ին չափաբաժնի մասով, գումարը՝ 559 002 ՀՀ դրամ, որի 1 տոկոսը կազմում է 5 590 ՀՀ դրամ:

«Վարմէքս» ՍՊԸ-ն հետևում է իր հարկային պարտավորություններին առցանց հարթակի միջոցով, որտեղ դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունների մասին տեղեկություններ չկան: Իսկ ՀՀ Ազգային ժողովի համապատասխան աշխատակիցը, քանի որ չունի առցանց նայելու հնարավորություն, ստանում է տեղեկություն ՀՀ ՊԵԿ հարցման միջոցով: Տեղեկանքները ներկայացվում են, որտեղ երևում է, որ 27.03.2019թ. դրությամբ առցանց առկա չէ պարտավորություն, իսկ ՀՀ Ազգային ժողովի հարցման միջոցով ստացված տեղեկանքով դրոշմանիշային վճարի գծով առկա է եղել 8000 ՀՀ դրամ պարտավորություն, որի պատճառով Ընկերությանը մերժել են որպես առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Սույն թվականի ապրիլի 1-ին «Վարմէքս» ՍՊԸ-ն վճարել է 8000 ՀՀ դրամ դրոշմանիշային վճարը, հարկային մարմնի հաշվեհամարին գումարը նստել և պարտավորությունը մարվել է ապրիլի 2-ին:

Ընկերությունը խնդրել է 8000 ՀՀ դրամ դրոշմանիշային վճարի ժամկետանց պարտավորությունը չդիտարկել որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով ժամկետանց պարտավորություն և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/84 ընթացակարգի շրջանակներում 14.06.2019թ ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Ազգային ժողովը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 31.05.2019թ. թիվ 1/2968-19 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից համակարգչային և ռադիո սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում 2-րդ չափաբաժնի մասով ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «Վարմէքս» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասին հարցում է կատարվել ՀՀ ՊԵԿ: Վերջինիս կողմից ստացվել է տեղեկատվություն, ըստ որի՝ վերոհիշյալ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ

կետով, գնահատող հանձնաժողովի որոշմամբ գնահատման նիստում «Վարմէքս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/84 ընթացակարգի շրջանակներում 14.06.2019թ ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/84 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/84 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 27.03.2019թ. մի շարք չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Վարմէքս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.04.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Վարմէքս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 12.04.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Վարմէքս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 8000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2019թ. ժամը 12:00-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Վարմէքս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.06.2019թ. թիվ 26/26-1/9251-2019 գրությունը, ՀՀ ազգային ժողովի աշխատակազմի 31.05.2019թ. թիվ 1/2968-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ (հետայսու նաև՝ Օրենք) օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշային վճարը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով և չափով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որի վճարման պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափով դրոշմանիշ գնելու միջոցով:

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի ժե) պարբերության համաձայն՝ հարկային եկամուտներն են՝ դրոշմանիշային վճարները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանութ-յան մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում

չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի

գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 27.03.2019թ. մի շարք չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Վարմէքս» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից մասնակցության հայտի թիվ 5 հավելվածով ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գինը 2-րդ չափաբաժնի մասով կազմել է 559 002 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.04.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Վարմէքս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 12.04.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Վարմէքս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 8000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2019թ. ժամը 12:00-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Վարմէքս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած

պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Միաժամանակ Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ «Վարմէքս» ՍՊԸ-ն «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորության չափը գերազանցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված գնային առաջարկի մեկ տոկոսի շեմը:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 20 բաժնի կողմից 19.04.2019թ. և 04.07.2019թ. տրված համապատասխանաբար թիվ 2523 և 3727 տեղեկանքները, համաձայն որոնց 27.03.2019թ. դրությամբ Ընկերությունն ունեցել է 8000 ՀՀ դրամի չափով դրոշմանիշային վճարի գծով պարտավորություն:

Ընկերությունը հայտնել է, որ իր հարկային պարտավորություններին հետևում է առցանց հարթակի միջոցով, որտեղ դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունների մասին տեղեկություններ չկան՝ միևնույն ժամանակ ներկայացնելով Ընկերության անձնական հաշվի քարտի քաղվածքը:

Այս տեսանկյունից հայտնում եմ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 10.05.2019թ. թիվ 3-4/17950-2019 գրությամբ հայտնել է, որ ՊԵԿ «Հաշվետվությունների

ներկայացման էլեկտրոնային համակարգի» «Հարկային պարտավորություններ» բաժնում 2018թ. նոյեմբեր ամսից տեղադրված է հետևյալ հաղորդագրությունը՝

«Սույն քաղվածքում դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունների կամ սահմանված չափից ավել վճարված գումարների վերաբերյալ տեղեկությունները արտացոլված չեն: Նշված տեղեկությունները ստանալու համար անհրաժեշտ է դիմել սպասարկման բաժին»:

Դրա հետ մեկտեղ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն դրոշմանիշային վճարը ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որը «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա հանդիսանում է հարկային եկամուտ և հիմք ընդունելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է նաև ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 20 բաժնի կողմից 18.06.2019թ. տրված թիվ 3552 տեղեկանքը, համաձայն որի՝ 23.10.2018թ. դրությամբ Ընկերության դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունը կազմել է 9000 ՀՀ դրամ:

Միևնույն ժամանակ Ընկերության կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի ներկայացվել համապատասխան գրավոր ապացույց, համաձայն որի 27.03.2019թ. (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) արձանագրված 8000 ՀՀ դրամի դրոշմանիշային վճարի գծով պարտավորության որ մասն է առաջացել մինչև 01.11.2018թ. և որի վերաբերյալ Ընկերությունը տեղեկացված չի եղել:

Ընկերությունը ներկայացրել է նաև «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի ԻնեկոՕնլայն ինտերնետային բանկային ծառայությունների համակարգի միջոցով 01.04.2019թ. իրականացված թիվ 1986 վճարման հանձնարարականը, որի համաձայն՝ «Վարմէքս» ՍՊԸ-ի կողմից կենտրոնական գանձապետարանի «900005001186» հաշվեհամարին իրականացվել է

8000 ՀՀ դրամ գումարի վճարում, ինչպես նաև ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 20 բաժնի կողմից 25.04.2019թ. տրված տեղեկանքը, համաձայն որի 02.04.2019թ. դրությամբ Ընկերությունը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի:

Այս տեսանկյունից հայտնում եմ, որ «Վարմէքս» ՍՊԸ-ն «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել 27.03.2019թ., մինչդեռ Ընկերության ներկայացրած վճարման հանձնարարականի համաձայն՝ առաջացած պարտավորությունը մարելու նպատակով վճարումն իրականացրել է 01.04.2019թ., այսինքն՝ Ընթացակարգին հայտ ներկայացնելուց հետո, մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն մասնակցի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների առկայության հարցը դիտարկվում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, արձանագրում եմ, որ «Վարմէքս» ՍՊԸ-ն «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի գտնում եմ, որ առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.06.2019թ. թիվ 26/26-1/9251-2019 գրությամբ «Վարմէքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել. «Վարմէքս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**